«Գավառի ավագ դպրոց» ՎԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթաց

Հետազոտական աշխատանք

Թեմա՝

Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Նազելի Գրիգորյան
Ղեկավար՝ Ժենյա Միրիբյան

ԳԱՎԱՌ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _2
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անհատի ստեղծագործական կարողությունների ձևավորումը համարվում է մանկավարժության և հոգեբանության կենսական խնդիր: Ստեղծագործական անհատականության ձևավորումը հնարավոր չէ առանց կրթության այնպիսի արդյունավետ միջոցի կիրառման, ինչպիսին գեղարվեստական ստեղծագործությունն է: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելն այնքան էլ հեշտ չէ և պահանջում է որոշակի հմտություններ և աշխատանք: Յուրաքանչյուր մանկավարժի խնդիրն է զարգացնել սովորողների գեղագիտական ճաշակը, հաղորդակցային ունակությունները, սովորեցնել զգալ արվեստի ստեղծագործությունների կատարելությունն ու ներդաշնակությունը, գթասիրտ, զգայուն վերաբերմունք դաստիարակել շրջապատի նկատմամբ: Այդպիսի հատկանիշների զարգացումը նշանակում է հաղորդակցում համամարդկային մշակույթին և նրա դրսևորումներին՝ գիտական հետազոտման մշակույթին, գործունեության մշակույթին, գեղագիտական մշակույթին, միջանձնային հաղորդակցման մշակույթին, վարքի մշակույթին և այլն: Ուստի մենք կանգ կառնենք «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում նպատակների և խնդիրների վրա, կփորձենք դրանք ուսումնասիրել և կիրառել խորապես ՝ ըստ կրթական աստիճանների:

«Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի նպատակը ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր:

Գեղարվեստական ստեղծագործությունն այսօր ակտիվ հետաքրքրություն է երեխաների նկատմամբ, յուրաքանչյուր երեխա ունի կարողություններ և տաղանդներ: Երեխաները բնականաբար հետաքրքրասեր են և սովորելու ցանկություն ունեն: Այստեղ կարող են շփվել, զարգանալ ու սովորել տարբեր

զարգացման, տարբեր սոցիալական կարգավիճակի, օժտված և հսկայական պաթոլոգիա ունեցող, ձախլիկ և աջլիկ, հարուստ և անապահով ընտանիքների երեխաները:

Յուրաքանչյուր մարդ ունի այն կարողությունները, որոնք նրան թույլ են տալիս ինչ-որ բան անել, և նրանց բազմազանության ու հարստության շնորհիվ յուրաքանչյուրը կարող է հաջողությամբ զարգանալ բազմաթիվ ուղղություններով, գտնել կարողությունների կիրառություն մի շարք գործունեության մեջ: Բայց բոլորի համար նրանք անհատական են, եզակի, ինչպես այն պայմանները, որոնցում նրանք ձևավորվել են: Բացի մյուսներից, մարդն օժտված է այն կարողություններով, որոնք նրան անհրաժեշտ են ցանկացած տեսակի գործունեության մեջ, այսինքն՝ ստեղծագործական կարողություններով:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մեջ ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը էապես կախված է մեծերից, հարազատներից և ուսուցիչներից, ովքեր շրջապատում են երեխային:

Ինքնուրույնությունը տարրական դասարաններում բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Մանկավարժների առջև բավականին հստակ պահանջ է դրված, աշակերտների մեջ սերմանել ինքնուրույնությունը, նոր գիտելիքներ ստանալու և դրանք մշակելու ունակությունը, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հատկությունը, տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու, վերլուծելու և դրանք առանձնահատուկ կերպով կիրառելու ձգտումը:

Կարևոր խնդիր է նաև սովորեցնել երեխաներին ստեղծագործաբար մոտենալ առկա խնդիրներին՝ չվախենալով ուսման մեջ առկա դժվարություններից: Ինքնուրույնության և ստեղծագործական հմտությունների ձևավորման և զարգացման մեջ հսկայական է ուսուցչի դերը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դասից դաս, դասարանից դասարան:

Ուսումնական արհեստանոցներում կատարվող գործնական աշխատանքների միջոցով կզարգացնեք նաև ձեր աշխատանքային ունակություններն ու հմտությունները, ձեռք կբերեք մասնագիտական փորձ, որը շատ կարևոր է մասնագիտության և ձեր հետագա աշխատանքի ընտրության առումով: Այլ կերպ

ասած՝ «Տեխնոլոգիա» առարկան աշակերտներին նախապատրաստում է ինքնուրույն աշխատանքային կյանքին և դաստիարակում է կիրթ, ստեղծագործ, նախաձեռնող և ակտիվ ապագա:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացման էությունը, կառուցվածքը, սկզբունքներն ու պայմանները, ինչպես նաև արդյունավետ տեխնոլոգիաների որոնումը ուսումնական գործընթացում դրանց կատարելագործման համար:

Հետազոտության խնդիրներն են՝

- **Ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,**
- **Անդրադառնալ սովորողներին ներկայացվող պահանջներին ըստ կրթական աստիճանի,**
- **Վարել չափորոշչահեն դաս և գրանցել արդյունքները:**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

«Տեխնոլոգիա» հունարենից թարգմանաբար նշանակում է արվեստ, ունակություն, վարպետություն: Ուսումնական արհեստանոցներում կատարվող գործնական աշխատանքների միջոցով կզարգացնեք նաև ձեր աշխատանքային ունակություններն ու հմտությունները, ձեռք կբերեք մասնագիտական փորձ, որը շատ կարևոր է մասնագիտության և ձեր հետագա աշխատանքի ընտրության առումով: Այլ կերպ ասած՝ «Տեխնոլոգիա» առարկան աշակերտներին նախապատրաստում է ինքնուրույն աշխատանքային կյանքին և դաստիարակում է կիրթ, ստեղծագործ, նախաձեռնող և ակտիվ ապագա մասնագետներ:

Աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման գաղափարը հետաքրքրել է ֆրանսիացի լուսավորիչ- փիլիսոփաներ Կ. Հելվեցիուսին, Դ.Դիդրոյին և ուրիշներին: Նրանք մարդու համակողմանի ու ներդաշնակ զարգացման պահանջի մեջ առանձնացրին հատկապես մտավոր և բարոյականդաստիարակության դերը, գտնելով, որ դրանք իրենց կապերի միջոցով կընդգրկեն այլ բաղադրիչներ: Ի տարբերություն նրանց , Ժ. Ժ. Ռուսոն պահանջեց բոլոր երեխաներին տալ նաև աշխատանքային դաստիարակություն ու նրանց նախապատրաստել աշխատանքի:

Այս հետազոտության ընթացքում մենք կիրականացնենք չափորոշչահեն ուսուցում՝ փորձելով բացահայտել կուտակված գիտական փորձի էությունը :

ԳԼՈՒԽ 1. ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տեխնոլոգիա առարկայի հիմնական առաքելությունն է սովորողներին նախապատրաստել ժամանակակից տեղեկատվական արդյունաբերական հասարակարգում ինքնուրույն աշխատանքային կյանքին և դաստիարակել կիրթ, ստեղծագործ, նախաձեռնող և ակտիվ անձնավորություն:

«Տեխնոլոգիա» կրթական ոլորտի նպատակներն են՝

- Ստեղծագործական և գեղագիտական զարգացումը, մասնավորապես՝ նախագծերի կատարման և նյութերի գեղարվեստական մշակման ընթացքում:
- Ընդհանուր աշխատանքային և կենսապես անհրաժեշտ հմտությունների ու կարողությունների տիրապետումը, այդ թվում՝ աշխատանքի կուլտուրա, ոչ կոնֆլիկտային շփում, որն անհրաժեշտ է խմբային աշխատանքի պայմաններում և ընտանիքում:
- Ինքնաճանաչման հնարավորության ապահովումը, մասնագիտությունների ուսումնասիրումը, տարրական մասնագիտական կողմնորոշման վրա հիմնված մասնագիտական փորձի ձեռքբերումը:

«Տեխնոլոգիա» առարկայի խնդիրներն են.

- Ստեղծել ուսուցողական պրոցես, որը տալիս է աշակերտին պատրաստակամություն, ինքնազարգացում:
- Զարգացնել երևակայական, ինքնուրույն, ստեղծագործական մտածողությունը:
- Ներդնել և ստեղծել նոր աշխատանքային գործընթացներ դպրոցում:
- Ստեղծել պայմաններ երեխայի աճի և զարգացման համար:
- Ստեղծել մեթոդներ, որոնք կհայտնաբերեն և կնպաստեն տաղանդավոր երեխաների զարգացմանը և խթանմանը:

- Ստեղծել պայմաններ՝ ուղղված երեխաների առողջապահպանողական ամրապնդմանը:
- Նպաստել աշակերտների մտածողության, բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը:
- Ապահովել սովորողների ակտիվությունը և հետաքրքրությունը ուսուցանվող նոր նյութերի նկատմամբ:
- Զարգացնել զույգերով և խմբերով աշխատելու հմտությունը և համագործակցելու կարողությունը:
- Դաստիարակել պատասխանատվության զգացում, սեփական աշխատանքի և ժողովրդական ստեղծագործությունների նկատմամբ:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը հնարավորություն է տալիս երեխային, անկախ իր առողջական վիճակից, զարգանալու և սովորելու առարկան, այդ ի սկզբանե շատ կարևոր է այս առարկայի ուսուցումը դպրոցներում, որը նպաստում է ներառական ուսուցում ստացող երեխաների զարգացմանը, որոնք հատուկ ուշադրության կենտրոնում են և կատարում են ավելի պարզ աշխատանքներ, որը նպաստում է նրանց հոգեկան վիճակի հանգստությանը և զարգացմանը: Տեխնոլոգիան մի առարկա է, որը նպաստում է թե՛ առողջ, թե՛ մտավոր թույլ ունակություններով երեխաների աճին և զարգացմանը: Այս առարկան երեխայի մեջ զարգացնում է բարություն, պատրաստակամություն, օգնելու ձեռք մեկնել նրանց, ովքեր ունեն դրա կարիքը և զարգացնել հարգանք դիմացինի նկատմամբ: Կարևոր է նաև ուսուցման մեջ ներառել այն ամենը, ինչը կապ ունի հայկական արվեստի հետ:

Առարկայի դերն է զինել աշակերտին տեխնոլոգիական գիտելիքներով, որն անհրաժեշտ է իմանալ կենցաղում, առօրյա գործերում, օրինակ՝ կինը ցանկալի է կոճակ կարի, իսկ տղամարդը նորոգի տան վնասված իրերը:

Այսպիսով՝ ուսուցչի դերն է, որ վերջինս պետք է տա երեխային խորը գիտելիքներ առարկայից և սովորեցնի, թե ինչպես պետք է լինել ինքնուրույն թե՛ կենցաղում և թե ՛առհասարակ կյանքի բոլոր իրավիճակներում: Տեղյակ լինել և զուգահեռ քայլել աշխարհի փոփոխությունների հետ և դպրոցն ավարտելուց հետո լինեն վստահ իրենց մասնագիտության ընտրության հարցում: Ուսուցչի սկզբունքն է՝

որքան հնարավոր է շատ գիտելիքներ հաղորդել աշակերտներին, դասը բացատրել մատչելի, դյուրըմբռնելի՝ օգտագործելով դասավանդման նորագույն մեթոդներ:

«Տեխնոլոգիա» առարկայի դասավանդումը V–VI դասարաններում կատարվում է հետևյալ թեմաներով.

– գրաֆիկա,
– խոհարարություն,
– հագուստի պատրաստման տեխնոլոգիա,
– նյութերի գեղարվեստական մշակում,
– մեքենագիտության տարրեր,
– էլեկտրոտեխնիկա,
– ձեռնարկատիրական գործունեություն,
– ռադիոէլեկտրոնիկա,
– դիզայն,
– մասնագիտական կողմնորոշում,
– նախագիծ:

Թեմաների ուսուցումն իրականացվում է տեսական գիտելիքների իմացությամբ, որը կիրառվում է գործնական աշխատանքների ընթացքում: Այդպես աշակերտները լավ են յուրացնում նյութը և ձեռք են բերում աշխատանքային հմտություններ և կարողություններ, որն էլ անհրաժեշտ է իրենց կյանքում: Դա նպաստում է նաև դպրոցում աշակերտների գեղագիտական զարգացմանը, քանի որ տարվա ընթացքում կազմակերպվում են տարբեր բնույթի ցուցահանդեսներ, որտեղ ցուցադրվում են աշակերտների ձեռքերով պատրաստված բազմատեսակ թեմատիկ և ստեղծագործական աշխատանքներ: Կազմակերպվում են նաև դաս-միջոցառումներ:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց:

Ինքնուրույնությունը սերտորեն կապված է այնպիսի հոգեբանական հատկանիշի հետ, ինչպիսին է երեխայի կամքը, որի շրջանակներում երեխան գիտակցված կերպով կարգավորում է սեփական վարքը և գործունեությունը: Վերջիններս, իրենց հերթին, դրսևորում են երեխայի կարողության մեջ՝ հաղթահարել դժվարությունները, որոնք հանդիպում են առաջադրված նպատակին հասնելու ճանապարհին:

Դառնալ ինքնուրույն և նախաձեռնող- օբյեկտիվ անհրաժեշտություն է և յուրաքանչյուր երեխայի բնական պահանջ: Սակայն, ինքնուրույն գործելու ունակությունը չի բացառում կողմնակի օգնության հնարավորությունը և, նույնիսկ, ցանկալիությունը:

Ինքնուրույնությունը սահմանվում է ոչ միայն որպես ազատություն արտաքին ազդեցություններից և պարտադրանքներից, այլև որպես ընդունակություն հակազդել դրանց և վերամշակել սեփական գիտակցության մեջ:

Ըստ մանկավարժական հանրագիտարանային բառարանի ինքնուրույնությունը սահմանվում է որպես անձի առանցքային որակներից մեկը, որն արտահայտվում է կարողության մեջ նպատակներ սահմանել և սեփական ուժերով հասնել դրանց իրականացմանը:

Հոգեբանության մեջ ինքնուրույնությունը սահմանվում է որպես անձի ընդհանրացված հատկություն, որն արտահայտվում է անձի նախաձեռնությամբ, քննադատությամբ, համարժեք ինքնագնահատականով և սեփական

գործողությունների, գործունեության և վարքի համար սեփական պատասխանատվության զգացումով: Այս ամենից կարելի է պնդել, որ տարրական դասարանում աշակերտի կրթությունը հաջողված կլինի, եթե ինքնուրույնությունը զարգացնեն նաև կրտսեր դպրոցական տարիքում:

Ինքնուրույն անձը պատասխանատվորեն է վերաբերվում իր սեփական քայլերին: Եվ այս որակը նպաստում է ձևավորել անկախ քաղաքացի:

Ինչպե՞ս օգնել երեխային դառնալ ինքնուրույն:

Առաջին՝ անհրաժեշտ է , որ դա դարձնի իր սեփական խնդիրը:

Երկրորդ՝ օգտակար է ցույց տալ ինքնուրույնություն ձեռք բերելու հնարավոր բոլոր ուղիները:

Երրորդ՝ երեխային տալ միջոցներ (ավելի ճիշտ՝ օգնել նրան տիրապետել դրանց) գործունեության կոնկրետ տեսակներում ինքնուրույնության հասնելու համար:

Մինչ դպրոց հաճախելը երեխաները բավականին ինքնուրույնություն են ձեռք բերում մանկապարտեզում, բայց որքան էլ մանկապարտեզում ձգտենք, որ երեխան ինքնուրույն լինի, ազատ մտածի և գործի, նրա ինքնուրույնության հիմնական օղակը ընտանիքն է: Ծնողների հոգատարության, վստահության, սիրո և խորհուրդների շնորհիվ երեխան հեշտությամբ հաղթահարում է մեծանալու «դժվար գործը», ընտանիքում իրեն կարևոր, պետքական է զգում և մանկապարտեզում, դպրոցում իր ինքնագնահատականը բարձր է լինում և հասարակության համար մեծանում է առողջ անհատ: Երեխան մինչև դպրոց հաճախելը արդեն պիտի լիարժեք տիրապետի ինքնուրույն հանվելու-հագնվելու, պայուսակը դասավորելու, իրեն հուզող հարցերը տալու, խնդրանք արտաբերելու և այլ նմանատիպ տարրական հմտություններին: Որպեսզի երեխան լինի ինտեգրվող նրան պետք է սովորեցնել ինքնուրույնություն: Պետք է երեխային սովորեցնել ինքնուրույն հաղթահարել դժվարությունները, այլ ոչ թե լինել հարմարվող: Ինքնուրույնության պակասն ամենաշատն է խանգարելու երեխայի ուսուցման գործընթացում: Վեց տարեկանում երեխան գնում է դպրոց: Աստիճանաբար նա ձեռք է բերում հմտություններ, կարողություններ պլանավորելու իր ժամանակը, պատասխանատու լինել դպրոցում իր իրերի

նկատմամբ: Սա հենց այն ժամանակահատվածն է, երբ երեխան դեռ կապված է ծնողի հետ, բայց նաև կարող է լինել ինքնուրույն:

Աշակերտի ինքնուրույնության զարգացումը և ՛ դպրոցի, և՛ ծնողների խնդիրն է: Ուսուցիչը կարող է օգնել երեխային տիրապետելու ուսումնական գործունեության կազմակերպման հմտություններին: Օրինակ՝ սովորեցնել աշակերտին ստուգել առաջադրանքը կատարելուց հետո, ճիշտ նախապատրաստվել թեստին, սահմանել նպատակներ, որոնց ուզում է հասնել կոնկրետ առարկայի ուսումնասիրության ժամանակ, կատարել թիմային կամ խմբային աշխատանք և առաջարկել, ներկայացնել սեփական դիրքորոշումը: Ծնողները պետք է համագործակցեն իրենց երեխաների հետ, պայմաններ պետք է ստեղծվեն երեխայի ինքնուրույն գործունեության համար՝ օգտագործել մշտական աշխատանքային հանձնարարություններ ընտանիքում, երեխաներին ներգրավել տարբեր տեսակի տնային ինքնասպասարկման աշխատանքներին (մաքրում, գնումներ, խոհարարություն, բույսերի խնամք, փոքր երեխայի խնամք և այլն):

Առաջատար հոգեբաններ և մանկավարժներ Վ. Դավիդովի, Գ. Ցուկերմանի և այլոց կարծիքով կրտսեր դպրոցականների ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը դասապրոցեսում առաջին հերթին արտահայտվում է կարողության և ընդունակության մեջ ինքնուրույն մտածել, կողմնորոշվել նոր իրավիճակում, ինքնուրույն տեսնել խնդիրը և դրա լուծման ուղիները:

Մտածողության ինքնուրույնությանը բնորոշ են հետևյալ կարողությունները.

- ➢ առանձնացնել գլխավորը, տեսնել ընդհանուր օրինաչափությունը և կատարել ընդհանրացնող եզրահանգումներ,
- ➢ հետևողական,տրամաբանորեն հիմնավորել իրգործողությունները և վերահսկել դրանք,
- ➢ գիտելիքները կիրառել անծանոթ պայմաններում՝ հաճախակի բարդացնելով՝ ստեղծագործաբար, ոչ ստանդարտ մոտեցմամբ,
- ➢ ստանալ արդյունքները՝առանց օգնության դիմելու:

Ընդհանուր առմամբ, տարբերակվում են աշակերտների ինքնուրույնության չորս մակարդակ.

Առաջին մակարդակ՝ պարզ վերարտադրողական ինքնուրույնություն: Այս մակարդակի ինքնուրույն գործունեությունը հատկապես վառ դրսևորվում է վարժությունների կատարման ընթացքում, որոնք պահանջում են գիտելիքների պարզ վերարտադրություն, երբ սովորողները, իմանալով կանոնները, իրենց ձեռքի տակ ունենալով պատրաստի նմուշը, ինքնուրույն լուծում են առաջադրանքները:

Ինքնուրույնության առաջին մակարդակ ունեցող աշակերտն առաջադրանքների կատարման ընթացքում անպայման կիրառում էիր ձեռքի տակ եղած օրինակը, նմուշը, մեթոդը: Եթե առաջադրանքը փոքր-ինչ չի համապատասխանում տրված նմուշին, ապա աշակերտը կդժվարանա լուծել այն: Ընդորում, նա հաճախակի հրաժարվում է կատարել առաջադրանքն այն պատճառաբանությամբ, որ այդպիսի առաջադրանքներ դեռևս չի կատարել:

Ինքնուրույնության **երկրորդ մակարդակը** կարելի է անվանել ընտրովի ինքնուրույնություն: Այս մակարդակում ինքնուրույնությունը դրսևորվում է այսպես. աշակերտը մի շարք կանոններից, դատողությունների օրինակներից, սահմանումներից և այլն կարողանում է ընտրել մեկը և կիրառել այն նոր առաջադրանքների ինքնուրույն կատարման գործընթացում: Ինքնուրույնության այս մակարդակում սովորողները կիրառում են մտավոր գործողություններ կատարելու կարողություններ՝ համեմատություն, վերլուծություն, համադրություն և այլն: Վերլուծելով առաջադրանքի պահանջները՝ աշակերտն ընտրում է արդեն ձեռք բերած գիտելիքներից, կարողություններից այն կարևորը, որն անհրաժեշտ է տվյալ առաջադրանքի կատարման համար:

Ինքնուրույնության **երրորդ մակարդակը՝** մասնակի-որոնողական ինքնուրույնությունն է: Այս մակարդակում աշակերտն առաջադրանքների կատարման ընթացքում կիրառում է առավել ընդհանրական կարողություններ, որոնք ձեռք է բերել այլ առարկաների և այլ թեմաների ուսուցման ընթացքում: Նա կարողանում է կատարել ինքնավերահսկում և ինքնագնահատում, կարողանում է ինքնուրույն պլանավորել և կազմակերպել իր ինքնուրույն գործունեությունը:

Սակայն այս մակարդակում դեռևս աշակերտը չի դրսևորում ստեղծագործական մոտեցում:

Ինքնուրույնության **չորրորդ մակարդակը՝** ստեղծագործական-հետազոտական գործունեություն ծավալելու մակարդակն է:

Ինքնուրույն աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի այն համապատասխանի յուրաքանչյուր աշակերտի կարողություններին, այսինքն ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները պետք է լինեն տարբերակված:

Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը

Փորձը ցույց է տալիս, որ՝

- Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:
- Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:
- Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:
- Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները:

ԳԼՈՒԽ 2.1. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ

Ստեղծագործությունը գործունեության գործընթաց է, որը ստեղծում է որակապես նոր նյութական և հոգևոր արժեքներ կամ օբյեկտիվորեն նորի ստեղծման արդյունք:

Շատ դարեր շարունակ հանրաճանաչ գիտնականները ուսումնասիրել են տարրական դպրոցական տարիքի երեխաների ստեղծագործական հնարավորությունների առկայությունը: Հաստատվեց, որ իրականում յուրաքանչյուր երեխա ծնված օրվանից ունի ստեղծագործական հնարավորություններ և ստեղծագործական աշխատանքի կարիք, բայց հաճախ դրանք մնում են չիրացված: Ցանկացած երեխա ձգտում է զարգացնել սեփական ստեղծագործական հնարավորությունները՝ հաճախ հանդիպելով ողջ աշխարհի դիմադրությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոքրահասակ դեռահասը մանկության տարիներին չի բացահայտել իր անձնական ստեղծագործական ներուժը, ապագայում նա հնարավորություն ունի պատկերացում կազմել, որ աշխատանքի այս պատկերն իրեն հասանելի չէ: Մինչդեռ պարզապես ստեղծագործական աշխատանքը թույլ է տալիս բացահայտել սեփական ինքնատիպությունը: Ստեղծագործությունն արտացոլում է մարդու ներքին տիեզերքը, նրա հոգսերը, հույսերը, ցանկությունները:

Կարողությունները դասակարգելու համար օգտագործվում են տարբեր չափանիշներ: Այսպիսով, կարելի է առանձնացնել զգայական, ընկալման, մնեմոնիկ, երևակայական, մտավոր, հաղորդակցական կարողությունները.

Զգայական շարժողական ունակությունների զարգացման շատ կարևոր մասն են կազմում «մատների խաղերը»: «Մատախաղերը» ցանկացած հանգավոր պատմությունների, հեքիաթների բեմադրություն է մատների օգնությամբ:

Ընկալման ունակություններ - սովորողի հուզական վիճակը նրա արտաքին տեսքով, ժեստերով, դեմքի արտահայտություններով, շարժումներով որոշելու ունակություն:

Մնեմոնիկ ունակությունները հիշողության տեխնիկա են, որը հիմնված է օժանդակ պատկերների ստեղծման վրա, որոնք տեղադրվում են նախապես նախագծված (կամ, ավելի քիչ հաճախ, ստեղծվող շարժման ընթացքում) վայրերում:

Երևակայական կարողությունները՝ անհատական, ռեսուրսային հաջողությունները հաջողության հասնելու ուղիներ են, դրանք գործիքային կարողություններ են, որոնք ներառում են ընդհանուր (ընկալողական) և հատուկ կարողություններ:

Մտածողության կարողությունները մտավոր գործիքներ են տարբեր տեսակի խնդիրների լուծման գործընթացների համար:

Հաղորդակցման ունակությունները անձի անհատական հոգեբանական բնութագրերն են, որոնք ապահովում են մարդկանց միջև արդյունավետ փոխգործակցություն և համարժեք փոխըմբռնում հաղորդակցության կամ համատեղ գործունեության գործընթացում:

Բացահայտվում են այն բաղադրիչները, որոնք կազմում են հատուկ կարողությունների կառուցվածքը, ինչը հնարավորություն է տալիս ձևավորել մանկավարժական առաջարկություններ՝ ուղղված ուսանողների մոտ կարողությունների ձևավորման արդյունավետության բարձրացմանը:

Գործելու կարողությունը ներառում է ավելի պարզ ունակությունների բարդ կառուցվածք: Դրանք կարող են արտահայտվել յուրացման արագությամբ և համապատասխան գիտելիքների, հմտությունների և կարողությունների ճիշտ կիրառմամբ, ինչպես նաև դրանց կիրառման ինքնատիպությամբ

Ինչպե՞ս է ընթանում ստեղծագործական գործընթացը:

Ստեղծագործական գործընթացն ունի մի քանի փուլ, որոնք կարող են լինել ավելի բարդ կամ հեշտ՝ կախված գործունեության ոլորտից: Գրական ստեղծագործության նկատմամբ կիրառվում է հետևյալ սխեման.

1. Պատրաստում. Սա որոշակի վիճակ է, որը նախապայման է պատկերացում կազմելու գաղափարի, սյուժեի, իրավիճակի, որտեղ մենք ցանկություն ունենք արտահայտելու մեր վերաբերմունքը դրա նկատմամբ: Ոմանց համար սա զբոսանք է անտառով, ոմանց համար՝ դժբախտ սիրո փորձ, իսկ ոմանց համար

բավական է նստել ձեր սիրած սեղանի շուրջ և ներդաշնակվել ստեղծագործելու համար: Երբեմն այս փուլն այնքան արագ է տեղի ունենում, որ թվում է, թե առանց նախապատրաստության ու մտորումների, ասես կախարդական փայտիկի ալիքով, ոգեշնչումը անմիջապես գալիս է մեզ: Դա տեղի է ունենում այն մարդկանց հետ, ում համար ստեղծագործությունը մասնագիտություն է, որով նրանք ապրում են: Կարելի է ասել, որ նրանք արդեն միշտ բաց են գաղափարների համար:

2. Գաղափարի հասունացում. Անգիտակից աշխատանք, որը դուք չեք կարող զգալ կամ նկարագրել, եթե դա հիշված երազ չէ, և այն ամենը, ինչ դուք պետք է անեք, գրելն է այն, ինչ երազել եք: Սա երբեմն պատահում է կրքոտ մարդկանց հետ:

3. Ոգեշնչում. Գաղափարը գալիս է գիտակցության մեջ և առաջացնում մտավոր աշխատանքի հետագա ընթացք: Սա նույնպես հաճախ տեղի է ունենում ակնթարթորեն, կարծես ինչ-որ մեկը պարզապես բացել է ձեր գիտակցության ծորակը և տեղեկատվությունը հոսել է:

4. Գաղափարի զարգացում. Գաղափարը աշխատանքի միջոցով ձևավորվում է կոնկրետ արդյունքի, թեև երբեմն թվում է, թե ամեն ինչ ինքն իրեն է ստացվում: Անկախ նրանից, թե դուք գծագրում եք նոթատետրում, թե մուտքագրում եք համակարգչով, ստուգում եք նախադասության ճիշտությունը, թե փնտրում եք անհրաժեշտ տվյալներ այլ աղբյուրներում, այս ամենը աշխատանք է, որը պահանջում է հմտություններ: Իզուր չէ, որ այդքան տարածված են վարպետության դասերը, մասնագետների հետ խորհրդակցությունները, օրական գոնե մի քանի տող գրելու կանոնը:

Ուսումնասիրության խնդիրն էր բացահայտել սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացման էությունը, կառուցվածքը, սկզբունքներն ու պայմանները, ինչպես նաև արդյունավետ տեխնոլոգիաների որոնումը ուսումնական գործընթացում դրանց կատարելագործման համար:

Հետազոտությունը հիմնված էր այն վարկածի վրա, որ սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացումն ավելի արդյունավետ կլինի, եթե.

- Դպրոցականների ստեղծագործական զարգացումը դիտարկել որպես կրթության ուղղություններից և նպատակներից մեկը.
- վերապատրաստման դասընթացը կկառուցվի՝ հաշվի առնելով դպրոցականների ստեղծագործական հատկությունների բարելավման հոգեբանական և մանկավարժական սկզբունքները.
- Ուսուցիչը տիրապետում է աշակերտների ստեղծագործական կարողությունների բարելավման ամբողջական տեխնոլոգիային:
- Ակտիվորեն կիրառվող մեթոդներից մեկը լինելու է տարբերակված առաջադրանքները, որոնց իրականացումը աշակերտներին ներգրավում է տեսակներով, ձևերով և նպատակներով բազմազան գործունեության մեջ:

<u>Այս նպատակին հասնելու և առաջարկված վարկածը ստուգելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.</u>

1) սահմանում է ուսումնասիրվող խնդրի զարգացման աստիճանը փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, մեթոդական գրականության մեջ:
2) գիտական աշխատանքների և հետազոտությունների ուսումնասիրության հիման վրա բացահայտել մարդու ստեղծագործական կարողությունների զարգացման կառուցվածքն ու առանձնահատկությունները:
3) որոշում է դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման հոգեբանամանկավարժական սկզբունքներն ու պայմանները:
4) սահմանում է աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակը որոշելու չափանիշներ:
5) տեսականորեն հիմնավորել և փորձնականորեն փորձարկել դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդական խրախուսման համակարգը:

Ստեղծագործությունը պետք է համարել բարդ կառուցվածք ունեցող ընդհանուր կարողություններ: Դրանք ներառում են երևակայություն, ինտուիցիա, խնդիրը

տեսնելու ունակություն, գիտելիքներ, հմտություններ և կարողություններ նոր իրավիճակին փոխանցելու ունակություն. օբյեկտի նոր գործառույթները տեսնելու ունակություն, խնդրի լուծման այլընտրանքային ուղիներ տեսնելու ունակություն. «մտքում» գործելու ունակություն, ինքնուրույն խնդիր դնելու ունակություն:

Ուսուցման ժամանակահատվածում անհատի ստեղծագործական ունակությունները հասնում են զարգացման տարբեր աստիճանի՝

I մակարդակ՝ պասիվ (վերարտադրողական գործունեության գերակշռում);

II մակարդակ - էվրիստիկ (վերարտադրողական-ստեղծագործական և ստեղծագործական- վերարտադրողական գործունեություն);

III մակարդակ - ստեղծագործական (ստեղծագործական գործունեություն):

Ստեղծագործական խաղերը նպաստում են երեխայի զարգացմանը: Դրանք կարող են բարելավել ֆիզիկական և հոգեկան առողջությունը, զարգացնել երևակայությունն ու հաղորդակցման հմտությունները: Նաև կարող են զարգանալ երեխաների՝ որոշումներ կայացնելու ունակությունը և համբերատարությունը: Նրանք կսովորեն ավելի լավ կառավարել իրենց զգացմունքները և համերաշխ խաղալ խմբում: Կարճ ասած՝ ստեղծագործական խաղերը երեխային նախապատրաստում են հասուն կյանքին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Մեր մանկավարժական պրակտիկայում բոլոր մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս բացահայտել և զարգացնել սովորողների գեղարվեստական ունակությունները, ստեղծագործական բնույթի հանձնարարությունների իրականացման կարողությունները նաև դաստիարակել ցանկացած գործունեությանը ստեղծագործական վերաբերմունքի ցուցաբերման հատկություն:
- Դասի նպատակին հասնելու լավագույն միջոցներից մեկը ճիշտ մեթոդների և միջոցների ընտրությունն է:
- Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել սովորողների զարգացումը,աշխարհայացքի ընդլայնումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:
- Տեխնոլոգիա առարկան բացառիկ դեր ունի երեխայի հոգեբանական, ինքնուրույն, կոնստրուկտիվ մտածելակերպը, ստեղծագործական ունակությունները զարգացման հարցում:
- Աշակերտի ինքնուրույնության զարգացումը և ՛ դպրոցի, և՛ ծնողների խնդիրն է: Ուսուցիչը կարող է օգնել երեխային տիրապետելու ուսումնական գործունեության կազմակերպման հմտություններին: Օրինակ՝ սովորեցնել աշակերտին ստուգել առաջադրանքը կատարելուց հետո, ճիշտ նախապատրաստվել թեստին, սահմանել նպատակներ, որոնց ուզում է հասնել կոնկրետ առարկայի ուսումնասիրության ժամանակ, կատարել թիմային կամ խմբային աշխատանք և առաջարկել, ներկայացնել սեփական դիրքորոշումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Տեխնոլոգիա» առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, հեղ.՝ Հովսեփյան Ս., Աղաջանյան Մ., Բարսեղյան Մ., Երևան, 2007 թ.,
2. «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2012.
3. Պապիկյան Կ., Տեխնոլոգիայի դասավանդման մեթոդիկա, 1-4 դդ., Երևան, հրատ., 2019 թ.,
4. Н. М. Бурцева, Межпредметные связи как средство формирования ценностных отношений, СПб., 2001,
5. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.
6. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս I, «Զանգակ» հրատարակչություն, 2013թ.
7. https://znanio.ru/media/-----2615119
8. https://www.dissercat.com/content/razvitie-tvorcheskikh-sposobnostei-uchashchikhsya-v-protsesse-obucheniya-na-materiale-prepod
9. https://lib.armedu.am/article/7451